

Հոգեշնորհ

24 Մայիս 1979

Տ. Վազգէն ծ. Վրդ. Քէշիշեան
Առաջնորդական Փոխանորդ
Գանատայի Հայոց
Թոռունձօ.

Յարգելի Հայր Սուրբ,

19 Մայիս 1979 Շաբաթ երեկոյան, Հ.Ր.Ա.Միութեան պարահանդէսին, տեղւոյն մասնաճիւղի յարգելի ատենապետ՝ Տիար Պետրոս Չիլիկիորեան պաշտօնապէս յայտարարեց, թէ Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ ծխական Խորհուրդը, եկեղեցի մը շինելու նպատակաւ, իրենցմէ 15,000 քառակուսի ոտք հողամաս մը գնած եւ 50,000.00 տօլար վճարած է ու վարչութիւնը ստացած գումարը 10,5 առ հարիւր տոկոսով դրամատուն պահ դրած:

Այս պաշտօնական յայտարարութիւնէն կը հասկցուի, թէ ծխական Խորհուրդը անշարժ կալուած գնած է:

Վստահ եմ ՚ուրբ յաւ գիտէք, միայն ու միայն Անդամական ժողովը անշարժ կալուած գնելու որոշում կրնայ տալ եւ այս որոշումը պէտք է ենթարկուի Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին հաւանութեան - Յօդ. 14՝ Ժ -:

Որքան որ կը յիշենք, ոչ տարեկան անդամական ժողովին այնպիսի որոշում տոնուած էր եւ ոչ ալ անելի վերջ այս հարցով մասնաւոր անդամական ժողով գումարուեցաւ: Անդ հետեւութիւն, ծխական Խորհուրդը հակառակորդական գիրքի մը մէջ է եւ ինքզինքը անդամական ժողովէն, Թեմական Խորհուրդէն եւ Առաջնորդէն գերադաս կը նկատէ:

Մենք կ'ուզենք հաւատալ, թէ ՚ուրբ՝ որպէս հոգեւոր հովիւ Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ եւ նախագահ ծխական Խորհուրդի, այսպիսի հակառակորդական վիճակի մը անսպայման առարկած էք, քանի որ հոգեւոր հովիւի մը պարտականութիւններէն է նսկել կանոնադրութեան Ճշգրիտ գործադրութեան - Յօդ. 42՝ Դ - :

Իթէ առարկած էք ու Չէր եւ ծխական Խորհուրդին միջեւ տարակարծութիւն ծագած է, հաւանաբար կագութիւնը ներկայացուցած էք Առաջնորդական Փոխանորդին՝ այսինքն Չէր անելի բարձր եղող երկրորդ հանգամանքին - Յօդ. 35 - :

Առաջնորդական կամ Առաջնորդի Փոխանորդը, ներկայացնելով Առաջնորդը, արտաւոր է նսկելու կանոնադրութեան Ճշգրիտ գործադրութեան - Յօդ. 86՝ Ե -:

Ենթադրելով, թէ ՚ուրբ՝ որպէս հոգեւոր հովիւ եւ նաեւ Առաջնորդական Փոխանորդ, կանոնադրութեան Չեզի տուած իրաւունքները ի գործ դնելով

հանդիման ծիսական Խորհուրդը հանահամունուդրական վիճակի ն շէր կը պատ
ուղղելի - գնումը կատարուած եւ վճարումը եղած է - եւ քանի որ նոյն
ծիսական Խորհուրդը անգեայի մէջ ալ հակականոնադրական դիրքի մէջ եղած
էր եւ ապագային ալ պիտի շարունակէ նոյնպէս գործել, Չեզի կը մնայ՝

ա- Անդամական ժողով հրատւիրել եւ անդամներուն թելադրել ծիսական
Խորհուրդին անվստահութեան քուէ տալ եւ նոր ծիսական Խորհուրդ
մը ընտրել.


կամ

բ- Առաջնորդէն յատկապէս խնդրել ներկայ ծիսական Խորհուրդը լու-
ծել եւ առժամեայ ծիսական Խորհուրդ մը նշանակել:

Այսպէսով թէ Չեզ օրինադատութիւնը պագուցած եւ թէ յանձնող
ծիսական Խորհուրդներուն պէր եղած օրինակը տուած կ'ըլլար:

Ապասելով Չեզ բացատրական պատասխան նամակին՝

Մնամ յարգանքով



ԱՐԱՄ ԲԻՆՔՅԱՆ